

# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՐՎԱԹԻԱՅԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը և Խորվաթիայի  
Հանրապետության Կառավարությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,  
ցանկանալով ամրապնդել և զարգացնել բարեկամական հարաբերությունները  
երկու երկրների և իրենց ժողովուրդների միջև,  
համոզված լինելով, որ մշակութային փոխանակումներն ու  
համագործակցությունը մշակույթի, կրթության և գիտության բնագավառներում էլ  
ավելի կնպաստեն փոխըմբռնմանն ու փոխադարձ ճանաչմանը,  
համաձայնեցին հետևյալի մասին.

## Հոդված 1

Պայմանավորվող կողմերը, իրենց երկրների ներպետական օրենսդրությանը և  
իրենց ստորագրած միջազգային համաձայնագրերին համապատասխան,  
համաձայնում են իրականացնել համագործակցություն մշակույթի, երիտասարդության  
հարցերի, սպորտի, կրթության և գիտության բնագավառներում:

## Հոդված 2

Պայմանավորվող կողմերը պետք է մշակույթի և արվեստի բնագավառում  
խրախուսեն համագործակցության տարբեր ձևեր.

ա) մասնագիտական և հատուկ գրականության թարգմանության բնագավառում  
համագործակցություն.

բ) շահագրգիռ գործընկերների միջև արվեստի և մշակույթի բնագավառի գրքերի,  
վավերագրերի և այլ հրապարակումների փոխանակում.

գ) մշակութային հաստատությունների՝ թանգարանների, պատկերասրահների,  
թատրոնների, գրադարանների, երաժշտական և համանման գործունեությամբ  
զբաղվող այլ հաստատությունների կողմից նախատեսված ցուցահանդեսների,  
համերգների և այլ զեղարվեստական ներկայացումների կազմակերպում.

դ) թատերական, գրականության, ֆիլմերի և թանգարանային գործի,  
կերպարվեստի, արխիվային գործի, ճարտարապետական և մշակութային  
ժառանգության պահպանության բնագավառներում տեղեկատվության և փորձի  
փոխանակում, ինչպես նաև վերը նշված բնագավառների փորձագետների  
անմիջական կապերի ապահովում.

ե) մշակութային սեփականության պաշտպանության, պահպանության և  
վերականգնման հարցերում համագործակցություն.

զ) մշակութային արժեքների ապօրինի ներմուծումը կամ արտահանումը  
կանխելու հարցերում համագործակցություն.

է) մշակույթի և արվեստի բնագավառում հեղինակային և հարակից իրավունքների

պաշտպանության ոլորտում համագործակցություն:

### Հոդված 3

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն մշակույթի, կրթության և գիտության գործիչների մասնակցությունը խորհրդատվողներին, սիմպոզիումներին, սեմինարներին և արվեստի փառատոներին, ինչպես նաև իրենց տարածքներում կազմակերպվող միջազգային միջոցառումներին:

### Հոդված 4

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նպաստի մյուս Պայմանավորվող կողմի երկրի լեզվի, գրականության, պատմության և քաղաքակրթության ուսումնասիրմանը:

Այս նպատակով Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն իրենց երկրների կրթության բնագավառի փորձագետների, ուսուցիչների, դասախոսների, համալսարանների պրոֆեսորների, գիտնականների և այլ փորձագետների փոխանակումները:

### Հոդված 5

Պայմանավորվող կողմերը պետք է նպաստեն մասնագիտական կրթության վերաբերյալ ավարտական փաստաթղթերի փոխադարձաբար ճանաչման և համարժեքության ապահովմանը: Այս նպատակով Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն նաև իրենց երկրների բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների փոխանակումները:

### Հոդված 6

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն իրենց երկրների համալսարանների, ֆակուլտետների, ակադեմիաների, բուհերի, վարժարանների, գիտական հաստատությունների, արխիվների, գրադարանների, թանգարանների և ցուցասրահների, ինչպես նաև մշակութային և կրթական այլ հաստատությունների ու ասոցիացիաների միջև անմիջական կապերը և փոխանակումները:

### Հոդված 7

Պայմանավորվող կողմերը պետք է աջակցեն սպորտի և երիտասարդության բնագավառներում հարաբերությունների զարգացմանը, ինչպես, օրինակ՝

ա) երիտասարդության և երիտասարդական կազմակերպությունների միջև համագործակցությանը.

բ) մարզական կազմակերպությունների միջև համագործակցությանը.

գ) մարզիկ (մարզուհիների) մասնակցությանը մյուս Պայմանավորվող կողմի տարածքում կազմակերպված միջազգային մարզական միջոցառումներին:

## Հոդված 8

Պայմանավորվող կողմերը պետք է խրախուսեն և իրագործեն համագործակցությունը միջազգային կազմակերպությունների շրջանակներում:

## Հոդված 9

Պայմանավորվող կողմերը համաձայնում են, որ սույն Համաձայնագիրը չի բացառում համագործակցության` Համաձայնագրում չնշված այլ հնարավորություններն ու ձևերը` Համաձայնագրի նպատակներին համապատասխան:

## Հոդված 10

Պայմանավորվող կողմերը պետք է սույն Համաձայնագրի գործնական իրականացմանն առնչվող հարցերի կարգավորման նպատակով իրենց իրավասու պետական մարմինների հավասար թվով լիազոր ներկայացուցիչներից ստեղծեն Համատեղ հանձնաժողով, որի նիստերը Պայմանավորվող կողմերի միջև նախապես համաձայնեցված ժամկետներում պարբերաբար և հաջորդաբար կգումարվեն Երևանում և Ջազրեբում:

Համատեղ հանձնաժողովը պետք է գործի իր հաստատած կանոններին համապատասխան:

## Հոդված 11

Պայմանավորվող կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում սույն Համաձայնագրի 12-րդ հոդվածով սահմանված կարգով:

## Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն օրվանից, երբ Պայմանավորվող կողմերը դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցում են դրա ուժի մեջ մտնելու համար իրենց ներպետական օրենսդրությամբ նախատեսված համապատասխան ներքին ընթացակարգերի կատարման մասին:

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հինգ տարիների համար մինչև Պայմանավորվող կողմերից որևէ մեկը դիվանագիտական ուղիներով գրավոր ծանուցման միջոցով չեղյալ հայտարարի այն ընթացիկ հնգամյա ժամանակահատվածը լրանալուց առնվազն վեց ամիս առաջ:

Սույն Համաձայնագիրը չեղյալ հայտարարելու դեպքում դրա դրույթները պետք է կիրառվեն Համաձայնագրի շրջանակներում նախաձեռնված և ընթացքում գտնվող որևէ փոխանակման ծրագրի, պայմանավորվածության կամ նախագծի նկատմամբ մինչև դրանց ավարտը:

Կատարված է Երևանում 2009թ. մայիսի 22-ին երկու բնօրինակով,

յուրաքանչյուրը՝ հայերեն, խորվաթերեն և անգլերեն. ընդ որում՝ բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարածայնությունների դեպքում գերակայում է անգլերեն տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2009թ. դեկտեմբերի 16-ին